This project is funded by the European Union

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

agricultural alliance
Գյուղատնտեսական դաշինք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԴՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿ ԴԱՇԻՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Առաջարկություններ

Ներկայացված քաղաքականության փաստաթղթի շրջանակներում վերլուծվել են գյուղատնտեսական ներդրանքի հիմնական տեսակների մատակարարման շղթաները: Հաշվի առնելով փաստաթղթի շրջանակը, հնարավոր չէր ավելի մանրամասն ուսումնասիրել ներդրանքի կոմերցիոն շուկան: Մինչդեռ մասնավոր հատվածի կարողությունների գնահատումն ու իրական պատկերի ստացումը շատ կարևոր են, հաշվի առնելով, որ 2018 թվականին ՀՀ կառավարությունն ուղղակի վճարման փորձնական ծրագիր իրականացրեց, իսկ 2019 թվականին բյուջեում բացակայում են սուբսիդավորման ծրագրերը: Փոխարենը՝ ուղղակի վճարումների համար նախատեսված է շուրջ 2 մլրդ դրամ այն պատճառաբանությամբ, որ ուղղակի վճարումներն ավելի թափանցիկ են, կոռուպցիոն ռիսկերն ավելի քիչ են և, միևնույն ժամանակ, այս քաղաքականությամբ հնարավոր է մեղմել տարածքային անհամամասնությունները:

Պետական դոտացիոն ծրագրերի դադարեցումը, որոնք ապահովում էին գյուղատնտեսական ներդրանքի հիմնական տեսակների գնումը/ներկրումը հանրապետություն ու դրանց բաշխումը հողօգտագործողներին, շուկայի հետագա ազատականացումը, լայն հնարավորություն է ստեղծում ներդրանքի կոմերցիոն շուկայի զարգացման համար: Հաշվի առնելով ներդրանքի գործուն, մրցակցային և արդյունավետ շուկայի կենսական կարևորությունը գյուղատնտեսության զարգացման համար, անհրաժեշտ քայլեր պետք է ձեռնարկվեն այդ շուկայի զարգացման ուղղությամբ:

Մասնավորապես.

1. Կարևոր է ուսումնասիրել և պարզել արդյոք «Սերմերի մասին» և «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքների դրույթներն ամբողջովին և ճշգրիտ են իրականացվում, թե ոչ: Առկա են ահազանգեր, որ շրջանառվում են չապրոբացված, չհավաստագրված սերմեր, ագրոքիմիկատներ և պարարտանյութեր: Կան բողոքներ, որ չեն պահպանվում պիտակավորման և փաթեթավորման նկատմամբ պահանջները:
2. Անհրաժեշտ է շուկայում ապահովել ազատ մրցակցություն, վստահ լինել, որ շուկայում գերիշխող դիրք ունեցող մասնակիցները, եթե այդպիսիք կան, այդ դիրքը չեն չարաշահում[1]:
3. Անհրաժեշտ ուսումնասիրել գյուղատնտեսական ներդրանքի կիրառման գրագիտության աստիճանը: Մասնավորապես, չեն պահպանվում պարարտանյութերի և բուժանյութերի կիրառման պահանջները, ինչը բերում է թե՛ բերքի կորստին, թե հողերի ագրոքիմիական որակի վատթարացմանը:
4. Անհրաժեշտ է ուսումնասիրել այս հարցում գյուղատնտեսական մասնավոր խորհրդատվական կառույցների դերը և նրանց կարողությունների զարգացման տարբերակները: Այս հարցը հատկապես արդիական է, հաշվի առնելով ՀՀ կառավարության մտադրությունը լուծարելու գյուղատնտեսության նախարարության կազմում գործող ՊՈԱԿները, գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը և նախապես պետության կողմից իրականացվող գործառույթներն արտապատվիրակել մասնավոր ընկերություններին:

Սույն քաղաքականության համառոտագիրը մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Գյուղատնտեսական Դաշինքի կողմից իրականացվող «Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ծրագրի շրջանակներումծրագրի շրջանակներում: Համառոտագրում տեղ գտած առաջարկություններրարտահայտում են Դաշինքի տեսակետը եւ կարող են չհամընկնել Եվրոպական միության դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Համառոտագրի հետ կապված հարցեր ունենալու դեպքում կարող եք կապվել՝

«Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ծրագրի համակարգող՝

Վաղիմ Ուզունյան

+374 91 221158
+374 93 718138
vuzunyan@oxygen.org.am